ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-486-25.02.2020-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ~~ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.***«Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«3. Ընտանեկան դրամագլուխը մինչեւ երեխայի (որի անվամբ բացված է պետական աջակցության հաշիվը, այսուհետ՝ հաշվետեր) 18 տարին լրանալը տնօրինում է երեխայի հետ նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) օրինական ներկայացուցիչը (ծնողը, խնամակալը, որդեգրողը)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով եւ կարգով անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է պետական աջակցության հաշվից դրամագլուխն ամբողջությամբ եւ կանխիկ ստանալու վերաբերյալ երեխայի օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը:»:~~

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերը, ինչպես նաև 26-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

~~***Հոդված 2.***Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«1. Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի (այսուհետ՝ խնամքի նպաստ) իրավունք ունեն երեխայի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ) գտնվող ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող) մինչեւ երեխայի երկու տարեկանը լրանալը, ինչպես նաեւ երեխայի ծնողը, եթե երեխայի խնամքի նպաստի համար դիմելու օրվա դրությամբ առնվազն մեկ տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, եւ նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը մինչեւ երեխայի մեկ տարեկանը լրանալը:»:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է 2020 թվականի հուլիսի 1-ին և դրանից հետո:

~~***Հոդված 3.***Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:~~

Հոդված 3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ընտանեկան դրամագլխի սպասարկման պայմանագիր կնքած բանկում նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին մուտքագրված գումարները (մնացորդները) ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի դիմումի հիման վրակարող են տնօրինվել նաև միանվագ կարգով: